Որոշ առաջարկություններ սոցիալական բացառումների փորձնական հետազոտության բովանդակության վերաբերյալ

Հայաստանի վիճակագրական համակարգի ամրապնդում – Ուխուլ

Աղքատության ռազմավարության առաքելություն

Գործողություն 4.1. Փորձնական հետազոտության գնահատում և պլանավորում

Դավիդե Դի Լաուրեա - Իստատ

Վելի Մաթթի Տորմելետո Վիճակագրություն Ֆինլանդիա

Սոցիալական բացառումների վիճակագրության միջազգային և եվրոպական ստանդարտները

Հիմնական գործիք.

ԵՄ- SILC/ԵԿՊՎ-ն *«հանդիսանում է Եվրոպական միությունում (ԵՄ) եկամուտների բաշխման և սոցիալական ներառման վերաբերյալ համեմատական վիճակագրության հոման աղբյուրը»*

Հիմնական ցուցանիշ.

AROPE-ն՝(at risk of poverty or social exclusion rate - աղքատության ռիսկի տակ կամ սոցիալական բացառումների մակարդակ (AROPE)) վերաբերում է մարդկանց այնպիսի իրավիճակին, որը բնութագրվում է կամ որպես աղքատության ռիսկ, կամ նյութական սուր զրկվածություն, կամ աշխատանքային շատ ցածր ինտենսիվություն ունեցող տնային տնտեսությունում ապրելը

AROPE-ն դա բաղադրյալ ցուցանիշ է (աղքատության կամ սոցիալական բացառումների ռիսկի ներքո, այսինքն զրկված երեք չափումներից առնվազն մեկով)

AROPE-ի բաղադրիչներ. 1- դրամական աղքատություն

1. Աղքատության ռիսկի տակ (ARP/ԱՌՏ)՝ դրամական աղքատության քանակական ցուցանիշ՝ հիմնված եկամտի բաշխման վրա. Այն ունի ոչ թե բացարձակ, այլև հարաբերական արտահայտություն:
   Դա համարժեքության սանդղակի բերված (equivalised) տնօրինվող եկամուտ ունեցող մարդկանց տոկոսն է, որն ավելի ցածր է աղքատության-ռիսկի-տակ շեմից՝ սահմանված համարժեքության սանդղակի բերված տնօրինվող եկամտի ազգային միջնագծի 60 %-ի չափով:

   Հայկական ԵԿՊՎ-ում դրամական աղքատության գնահատումը հիմնված է սպառման ագրեգատի վրա, որը ավելի շատ բացարձակ, քան հարաբերական չափում է:

Չի առաջարկվում փոխել այս մոտեցումը

AROPE-ի բաղադրիչներ. 2- ցածր աշխատանքային ինտենսիվություն

2. Ցուցանիշը՝ **ցածր աշխատանքային ինտենսիվությամբ տնային տնտեսություններում ապրող անձինք,** որը հաշվարկվում է որպես տարվա ընթացքում տնային տնտեսության աշխատանքային տարիքի անդամների աշխատած ամիսների ընդհանուր թվի հարաբերակցություն՝ նույն ժամանակահատվածում այն ամիսների ընդհանուր թվի հետ, որոնց ընթացքում նույն տնային տնտեսության անդամները տեսականորեն կարող էին աշխատած լինել (սահմանված շեմը 0.20):

Հայաստանի ՏՏԿԱՀ/ILCS-ում զբաղվածության չափումն արդեն ուսումնասիրված է: Օգտագործվում է ԱՄԿ սահմանումը (ինչպես ԱՈԻՀ/LFS): Ցածր աշխատանքային ինտենսիվության ցուցանիշը հաշվարկելու համար հարցերի խումբ՝ իրականացնելը պարզվում է չափազանց ծախսատար է՝ համապատասխան պոտենցիալ շահառուների առումով:

Այս փուլում չի առաջարկվում իրականացնել այս ցուցանիշը

AROPE-ի բաղադրիչներ. 3- նյութական զրկվածության հարցեր

3. Նյութական զրկվածությունը վերաբերվում է՝անհատների կամ տնային տնտեսությունների անկարողությանը թույլ տալ այնպիսի սպառողական ապրանքներ և ծառայություններ, որոնք բնորոշ են հասարակությանը տվյալ ժամանակահատվածում՝ անկախ մարդկանց նախասիրություններից:

Նյութական զրկվածության չափումները տալիս են աղքատության հեռանկար, որը լրացնում է պայմանական դրամային աղքատության չափումներով ապահովված հեռանկարը

Ի տարբերություն հարաբերական եկամտային աղքատության, նյութական զրկվածությունը նաև արտացոլում է ԵՄ երկրներում բացարձակ կենսապայմանների միջև տարբերությունները

ԵՄ- SILC/ԵԿՊՎ ցուցանիշի իրականացումը ԵԿՊՎ-ում

Հայկական ԵԿՊՎ-ի հարցաթերթում նյութական զրկվածության տեսանկյունից համարժեք շատ հարցեր արդեն ներառված են:

Փորձնական հետազոտության հարցաթերթը պետք է կառուցվի ԵՄ ԵԿՊՎ նյութական զրկվածության թիրախային և այլ փոփոխականների վրա: Նպատակն է ԵՄ –ԵԿՊՎ բովանդակության առումով ընդգրկվածությունը՝ չվնասելով հայկական ԵԿՊ բովանդակությունը:

Կոնկրետ նպատակն է կարողանալ հաշվել սուր նյութական զրկվածությունը, ինչպես մասնավորեցված է ԵՄ-ԵԿՊՎ-ում

(Ս)ՆԶ ((Սոցիալական) և նյութական զրկվածություն) ԵՄ-ԵԿՊՎ. Ընթացիկ իրավիճակը

ԵՄ-ԵԿՊՎ նյութական զրկվածության հարցերը կվերանայվեն, և հնարավոր է դրանք լինեն 13-ը, ներկայիս 9-ի փոխարեն.

9 հարցերի ցանկը.

- Հիփոթեքային կամ վարձակալության վճարներ, կենցաղային կոմունալ ծախսեր, մարումներով վճարումներ կամ այլ վարկային վճարումներ;
- Մեկ շաբաթյա արձակուրդ տնից հեռու;
- Մսով, հավով կամ ձկով կամ դրան համարժեք բուսակերային կերակուր ամեն երկրորդ օրը;
- Անսպասելի ֆինանսական ծախսեր;
- Հեռախոս (այդ թվում բջջային հեռախոս);
- Գունավոր հեռուստացույց;
- Լվացքի մեքենա;
- Ավտոմեքենա;
- Ձեռուցում՝ տունը բավարար տաք պահելու համար:

Առաջարկվել է լվացքի մեքենայի, հեռուստացույցի և հեռախոսի հարկադրված պակասը հանել ընթացիկ 9 հարցերից:

ԵՄ-ԵԿՊՎ-ում (Ս)ՆՋ համար նոր հարցեր

Հարցերը ոչ թե հին, այլև նոր՝ 13 հարցերի ցուցակում.

Բոլոր 16+ տարիքի մեծահասակների համար.

- Փոխարինում է մաշված հագուստը նորով;
- Ունի իր ոտքի չափին համապատասխան երկու զույգ կոշիկ;
- Յուրաքանչյուր շաբաթ փոքր չափի գումար է ծախսում իր վրա;
- Ունի ազատ ժամանակն անցկացնելու կանոնավոր միջոցառումներ;
- Ամեն ամիս ընկերների/ընտանիքի հետ հավաքվում է սեղանի շուրջ՝ ուտելու կամ խմելու

Տնային տնտեսության մակարդակով.

- Մաշված կահույքի փոխարինում;
- Ե՛վ համակարգիչ և՛ ինտենետային կապ;

Առաջարկություն

- Ամբողջ 13 հարցերի ցանկը կարելի է դնել փորձնական հարցաթերթում՝ արդյունքների գնահատման համար
- Ձևակերպումը պետք է հետևի ԵՄ- ԵԿՊՎ թիրախ փոփոխականներից մեկին
- Ցանկը պետք է/կարող է ընդլայնվել երեխայի նյութական զրկվածության մասին հարցերով, ի լրումն նրանց, որոնք արդեն իսկ հավաքագրված են երեխայի կարիքների հարցաթերթի միջոցով
- ՀՀ ԱՎԾ անձնակազմը կարող է դիտարկել նյութական զրկվածության հետ կապված ցանկացած այլ հարց, որը տեղին կլիներ երկրի իրավիճակի առումով